Արձանագրություն N 18/12-3

"ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/12" ծածկագրով ARMEPS համակարգի միջոցով իրականացվող գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի ամփոփման նիստի

ք. Երևան 21 հունիսի 2018թ. Ժամը 12:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ (ԳԱՊ)	Մ. Գյուլումյան,
Գնահատող անդամներ (ԳԱ)՝	Ա. Վարդանյան,
Բացող անդամներ (ԲԱ)՝	Վլ. Դեխտյարով, Ստ. Թաթիկյան,
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀմ)՝	Ա. Բաղրամյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատում:
2. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում:
3. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցի մասին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության գնահատում

2.1 ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից ստացված եզրակացության համաձայն առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը՝ «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ:

3. Առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի գնահատում

3.1 Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը սահմանված կարգով և ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին է ներկայացրել իր կողմից հաստատված, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ Հրավերի հավելված NN 6 և 6.1: Ապրանքի ամբողջական նկարագիրը համապատասխանում է Հրավերով սահմանված՝ գնման առարկայի տեխնիկական բնութագրին:

Հիմք ընդունելով 2.1 և 3.1 կետերը գնահատող հանձնաժողովը որոշեց.

1. ՔԵՆԴԼ-ԳՀԱՊՁԲ-18/12 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից «ՍիՓիէս Օիլ Քորփորեյշն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
2. Հաստատել և գնումների էլեկտրոնային տեղեկագրում հրապարակել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և ընտրված մասնակցի իրական շահառուների մասին տվյալները:
3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն սույն ընթացակարգի հետ կապված անգործության ժամկետը 5 օրացուցային օր է:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Գնահատող հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.N 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 29-րդ կետը՝ պայմանագիրը կնքելուն հաջորդող օրը Գնահատող հանձնաժողովը համարվում է լուծարված:

Հանձնաժողովի նախագահ (ԳԱ+ԳԱՊ)	_____	Մ. Գյուլումյան
Գնահատող անդամ (ԳԱ)՝	_____	Ա. Վարդանյան
Բացող անդամներ (ԲԱ)՝	_____	Վլ. Դեխտյարով
	_____	Ստ. Թաթիկյան
Հանձնաժողովի քարտուղար (ՄՀմ)՝	_____	Ա. Բաղրամյան